

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ
ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

«10 » մարտի 2021 թ.

N 13 -Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՑ
ԳԱՆՁՎՈՂ ՄՈՒՏՔԻ ԿՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱԼԱՏԻ ԺՈՂՈՎԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ
ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 13.11.6 և 14.16.6 կետերը և Պալատին անդամակցության կարգի 7.1.3 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Ժողովի հաստատմանը ներկայացնել Պալատի մուտքի վճարի և անդամավճարների չափերի վերաբերյալ Պալատի Ժողովի որոշման նախագիծը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների Պալատ»
հասարակական կազմակերպության
խորհրդի

2021թ. մարտի 10 - ի N 13 - Լ որոշման

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ
ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

«»2021 թ.

N

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՑ
ԳԱՆՁՎՈՂ ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 13.11.6 կետը և Պալատին անդամակցության կարգի 7.1.3 կետը՝ Պալատի ընդհանուր ժողովը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) Պալատի անդամ աուդիտորական կազմակերպություններից, աուդիտորներց և փորձագետ հաշվապահներից միանվագ գանձվող մուտքի վճարների չափը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Պալատի աուդիտորական կազմակերպություն, աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամներից տարեկան պարբերականությամբ գանձվող հաստատուն անդամավճարների չափը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Պալատի աուդիտորական կազմակերպություն անդամներից եռամսյակային պարբերականությամբ գանձվող փոփոխուն անդամավճարների չափը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անդամավճարների վճարման ժամկետները սահմանված են «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության անդամակցության կարգը հաստատելու մասին Պալատի խորհրդի որոշմամբ հաստատված Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության անդամակցության կարգով:
3. Մինչև 2021 թվականի մարտի 31-ը Պալատին անդամակցող աուդիտորական կազմակերպություններից, աուդիտորներից և փորձագետ հաշվապահներից սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված տարեկան հաստատուն պարբերական անդամավճարները սկսվում են գանձվել 2021 թվականի հունվարի 1-ից՝ 2021 թվականի և դրան հաջորդող տարիների համար: Ընդ որում, 2021 թվականի տարեկան հաստատուն պարբերական անդամավճարների վճարման ժամկետ է սահմանվում մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:
4. Մինչև 2021 թվականի մարտի 31-ը Պալատին անդամակցող աուդիտորական կազմակերպություններից, աուդիտորներից և փորձագետ հաշվապահներից սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված եռամսյակային փոփոխուն պարբերական անդամավճարները սկսվում են գանձվել 2021 թվականի հունվարի 1-ից՝ 2021 թվականի առաջին և դրան հաջորդող եռամսյակների համար: Ընդ որում, 2021 թվականի առաջին եռամսյակի համար անդամավճարների վճարման ժամկետ է սահմանվում մինչև 2021 թվականի հունիսի 1-ը:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 1

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների Պալատ»
հասարակական կազմակերպության
ընդհանուր ժողովի
2021թ. մարտի 10-ի N 13 - Լ որոշման

**ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ,
ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻՑ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻՑ ԳԱՆՁՎՈՂ
ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ**

1. Պալատի անդամ աուդիտորական կազմակերպություններից, աուդիտորներից և փորձագետ հաշվապահներից գանձվող մուտքի վճարի չափը հետևյալն է՝

- | | |
|-----------------------------------|-------------|
| 1) աուդիտորական կազմակերպություն՝ | 30 000 դրամ |
| 2) աուդիտոր՝ | 10 000 դրամ |
| 3) փորձագետ հաշվապահ՝ | 10 000 դրամ |

2. Մուտքի վճարների վճարման ժամկետը սահմանված է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությանը անդամակցելու կարգում:

Հավելված 2

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների Պալատ»
հասարակական կազմակերպության
ընդհանուր ժողովի
2021թ. մարտի 10-ի N 13 - Լ որոշման

ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՑ, ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻՑ և ՓՈՐՃԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ

1. Պալատի անդամ աուդիտորական կազմակերպություններից, աուդիտորներից և փորձագետ հաշվապահներից տարեկան պարբերականությամբ գանձվող հաստատուն անդամավճարի չափը հետևյալն է՝

1) աուդիտորական կազմակերպություններ	250 000 դրամ
2) աուդիտորներ	36 000 դրամ
3) փորձագետ հաշվապահներ	36 000 դրամ

2. Անդամավճարների վճարման ժամկետը սահմանված է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությանը անդամակցելու կարգում:

Հավելված 3

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների Պալատ»
հասարակական կազմակերպության
ընդհանուր ժողովի
2021թ. մարտի 10-ի N 13 - Լ որոշման

ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԳԱՆՁՎՈՂ ՓՈՓՈԽՈՒՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ

1. ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԳԱՆՁՎՈՂ ՓՈՓՈԽՈՒՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ, ԿԱԽՎԱԾ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՍՈՒՅԹՆԵՐԻՑ

1) Աուդիտորական կազմակերպությունից յուրաքանչյուր եռամսյակի համար գանձվող անդամավճարի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՎ_{ՀԱՑ} = Հ_{ԱՑ} \times 0,3\%,$$

որտեղ՝

ԱՎ_{ՀԱՑ}՝ եռամսյակի համար գանձման ենթական անդամավճարի գումարն է,

Հ_{ԱՑ}՝ տվյալ եռամսյակում աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտորական ծառայությունների դիմաց ստացված հասույթի գումարն է:

2) Աուդիտորական ծառայությունը ներառում է աուդիտը և (կամ) աուդիտորական դիտարկումը:

3) Անդամավճարների վճարման ժամկետը սահմանված է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությանը անդամակցելու կարգում:

2. ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԳԱՆՁՎՈՂ ՓՈՓՈԽՈՒՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ՝ ԿԱԽՎԱԾ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ԱՌԽՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՌԻԴԻՏԻ ՔԱՆԱԿԻՑ

1. Աուդիտորական կազմակերպությունից յուրաքանչյուր եռամսյակի համար գանձվող անդամավճարի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՎ_{\text{ու.բ}} = \text{Ք}_{\text{ու}} \times 40000 \text{ դրամ,}$$

որտեղ՝

ԱՎ_{ու.բ}՝ եռամսյակի համար վճարման ենթական անդամավճարի գումարն է,

ՔՊԱ՝ տվյալ եռամսյակում առևտրային կազմակերպություններում իրականացված պարտադիր աուդիտի քանակն է:

2. Անդամավճարների վճարման ժամկետը սահմանված է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությանը անդամակցելու կարգում: